տական գործունէութեան ժամանակ շատ անգամ եկաւ առանձնացաւ Սեպուհի վերայ ճգնողական կեանք վարելու, մինչև որ ի վերջոյ այնտեղ մնաց և այնտեղ էլ կնքեց իւր մահկանացուն։

Յովհաննէս կաթուղիկոս Դրասխանակերտցին Ժ. դարում անձամբ շրջեցաւ Սեպուհի սրբավայրերը և համառօտ նկարագրում է իւր տեսածը. Գնացի, ասում է, այն սուրբ այրը, որտեղ ս. կինն Մանի, և ապա երիցս երանեալ մեր Լուսաւորիչն էր բնակել. տեսայ այնտեղ քարանձաւի խորքերում մի փոքրիկ փորուածք դժուարամուտ դռներով. նորա մէջ տէրունական սեղան կար պատարագի համար. ապա գնացի կանգնեցայ այն քարի մօտ, որտեղ «մեր լուսաւորութեան առիթը» երկու օր կանգնած ըսպասում էր սուրբ Մանի կոյսի վախճանին. այնտեղ ուխտ անելուց յետոյ գնացի «ի բարեհամ աղբերիկն» որ անտաշ քարերով շրջապատուած է և դռներ ունի. որտեղից որ Ս. Գրիգոր ջուր էր առնում խմելու, նոյն տեղից և ես թշուառականս արժանացայ ջուր առնելու և խմելու. օրհնած հող առայ այն փուլ եկած դարակից, որի մէջ հովիւները ծածկել էին հոգևոր պատուական գանձը, նորա վերայ արդէն իմ հրամանով մի քարուկրեայ եկեղեցի էր շինուած. քարանձաւերի խորքերում տեսայ կուսակրօն, խարազնազգեաց, բոկագնաց, խոշորաձաշակ մարդիկ, որոնք մնում էին այնտեղ մշտամնունչ